

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԼԵՆԴՐՈՒԾԻ

**ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՆԿԱՏՄԱԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հիմնախնդրի արդիականությունը: Աղետները հասարակության պատմությանն ուղեկցող անխուսափելի երևույթներ են: Դրանք իրենց ծագումով, ինտենսիվությամբ և բնույթով բազմաթիվ ու տարատեսակ են և կարող են կործանարար հետևանքներ ունենալ ցանկացած հասարակարգի համար:

Հասարակության զարգացման արդի փուլը ևս զերծ չէ տարաբնույթ աղետներից, դրանց ուղեկցող և հաջորդող արտակարգ իրավիճակներից, որոնք անկանխատեսելի են դարձնում մարդկային կացութաձևի հետագա ընթացքը: Նման իրավիճակներին դիմակայելու համար պահանջվում է արդիական մոտեցում, ինչը, նախ և առաջ, ենթադրում է տարերային աղետներին հետևող արտակարգ իրավիճակների՝ հատկապես երկրաշարժերի հետևանքով առաջացող հիմնախնդիրների խոր ու բազմաբնույթ ուսումնասիրություն: 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժն ազգին պատճառեց ոչ միայն նյութական, ֆիզիկական կորուստներ, այլև հասցրեց բարոյահոգեբանական, սոցիալ-հոգեբանական ավերածություններ: Այն ցույց տվեց, որ բնակչությունը թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական տեսանկյունից պատրաստ չէր նման իրավիճակներում կողմնորոշվելու, գործելու: Այս իրավիճակում էր, որ տեսանելի դարձավ բնական աղետներին դիմակայելու մեր անպատրաստությունը՝ կազմակերպչական աշխատանքի փորձի պակասը, կարճ ժամանակում վճիռ կայացնելու անկարողությունը, վերականգնողական աշխատանքի րականացնող մասնագետների, միջոցների տղությունը և այլն: Այս փորձը ևս մեկ անգամ հաստատեց այն ճշմարտությունը, որ տարաբնույթ աղետներին դիմակայելու համար նախ կարևորվում է մարդկանց «գինումը» անհրաժեշտ գիտելիքներով ու միջոցներով, հետո նոր միայն դրանց հետևանքները վերացնելու գործընթացը:

Ուստի և տվյալ աշխատանքում փորձել ենք ներկայացնել այն ուղիները, որոնք փոքրիշատե կօգնեն նվազեցնել բնակչության՝ երկրաշարժի նկատմամբ սոցիալ-հոգեբանական խոցելիության աստիճանը: Նման ուսումնասիրությունները հրատապ և արդիական են, քանի որ երկրաշարժին դիմակայելու ուղղությամբ արդյունավետ աշխատանքներ կազմակերպելու համար պարտադիր է ունենալ սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի՝ գիտահետազոտական տվյալների հենքով ստեղծված գիտելիքների այնպիսի պաշար, որով հնարավոր լինի իմանալ աղետի ժամանակ մարդկանց մեջ առաջացող հոգեկան դրսևորումների յուրահատկությունները, գնահատել նրանց ճիշտ գործելու պատրաստականության աստիճանը և այլն: Դեռ Սպիտակի աղետի դասերն ուսումնասիրելիս պարզ էր, որ մեծաթիվ զոհերի քանակը պայմանավորված էր մարդկանց չիմացությամբ, սխալ գործողություններ կատարելու հետևանքներով: Ճիշտ է, գիտելիքների չիմացությունը կարելի է լրացնել հատուկ դասընթացների, հեռուստահաղորդումների, սեմինարների և այլնի միջոցով, բայց այսօր առավելապես կարևորվում է այդ գիտելիքների կիրառման կարողությունը: Մարդը, իմանալով ճիշտ գործողությունների համակարգը, հաճախ չի կարողանում դրանք կիրառել, քանի որ համապատասխան հոգեբանական պատրաստվածություն չունի: Ուստի, ելնելով այս տեսակետից, հարց է առաջանում ինչ անել, որ գիտելիքների ձեռքբերումը զուգորդվի հոգեբանական

պատրաստվածությանը: Այս ուղղությամբ կատարվել են աշխատանքներ, որոնք, անշուշտ, փորձել են լուծել առաջադրված խնդիրը, բայց դրանք իրենց բնույթով ամբողջական չեն, քանի որ ընդգրկել են միայն մասնակի միջոցառումներ, որոնք մատչելի չեն դարձել լայն զանգվածներին (օրինակ՝ տնակ-վարժասարքի կիրառումը): Մեր աշխատանքը միտում ունի երկրաշարժի դիմակայման անհրաժեշտ գիտելիքներն ու հոգեբանական պատրաստվածությունը կիրառելի դարձնել բնակչության լայն շրջանների համար:

Հետազոտության համար ընտրված թեման պահպանում է իր նշանակությունը գիտության զարգացման պատմության մեջ, քանի որ մի շարք գիտնականներ (Լ.Ա. Կիտան-Սմիկ (1977), Մ.Պ. Սկրտումյան (1997, 1999, 2004), Յու.Ա. Ալեքսանդրովսկի (1991), Վ.Գ. Վոլովիչ (1983), Վ.Բ. Գելֆանդ, Պ.Վ. Նաչալով, Ե.Ս. Մազուր (1990), Վ.Պ. Գլոսարսկի (1994), Վ.Ա. Պոնոմորենկո (1983)) փորձել են անդրադառնալ այդ հիմնախնդրին և առաջարկել իրենց լուծումները:

Մեր կատարած աշխատանքի համար հայեցակարգային հիմք են հանդիսացել Յու. Ա. Ալեքսանդրովսկու՝ Սպիտակի երկրաշարժից հետո կատարած հետազոտությունները, որոնցում նա անդրադարձել է տուժածների ինչպես անհատական սոցիալական աղապտացիայի հիմնախնդրին, այնպես էլ խմբային հարմարվողականության առանձնահատկություններին (1989, 1991, 1990, 2004), Մ. Պ. Սկրտումյանի՝ արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության, հոգեկան առողջության, անձի հոգեկան ոլորտում առաջացող վնասվածքների սոցիալ-հոգեբանական տեղաշարժերի և հոգեբանական պատրաստվածության խնդրում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկայի վերաբերյալ աշխատանքները (1997, 2001, 2004, 2008), Լ. Ա. Կիտան-Սմիկի՝ արտակարգ իրավիճակներում անձի աղապտացիայի հոգեբանական առանձնահատկությունների ու մեխանիզմների, հոգեբանության բնագավառում արտակարգ իրավիճակների դեպքում պատրաստվածության մասին ուսումնասիրությունները (1977, 1983), Մ. Ի. Դյաչենկոյի կողմից առաջադրված՝ արտակարգ իրավիճակներում գործելու պատրաստվածության մոդելը, ինչպես նաև Ց. Պ. Կորոլենկոյի՝ անձ-իրավիճակ փոխազդեցության տեսությունը:

Հետազոտվող հիմնախնդրի տեսական և մեթոդաբանական հայեցակետերի վերլուծության արդյունքները հիմք են տվել եզրակացնելու, որ հոգեբանական պատրաստվածության հարցում խիստ արդիական է այն տեսակետը, ըստ որի՝ երկրաշարժի ժամանակ գիտակցված վերաբերմունք ձևավորելու համար պետք է հաշվի առնել անձի սոցիալական, տարիքային և սեռային առանձնահատկությունները:

Աշխատանքում փորձ է արվել նորոպի ներկայացնել սեյսմապաշտպանության վարքականոնների ձևակերպումները, մատուցման ձևը և այլն, որպեսզի դրանք միանգամից տպավորվեն մարդկանց ենթագիտակցության մեջ և անհրաժեշտ պայմաններում դառնան վարքի դրսևորման ձև: Այդ նպատակով մշակվել են իրահանգներ, որոնք ոչ թե վախ, սարսափ կառաջացնեն, այլ ինքնավստահություն, գործելու ձգտում:

Գիտական վարկածը:

Սեյսմապաշտպանության բնագավառում բնակչության վարքականոնների ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է իրազեկման գործընթացի

առանձնահատկությունների՝ մատուցման ձևի, անձնային առանձնահատկությունների՝ տարիքային ու սեռային գործոնների և հոգեբանական հարմարվողականության, սթրեսակայունության, երկրաշարժի նկատմամբ դիրքորոշումների /պատկերացումների/ փոխկապակցված կառուցվածքով, որը կարևոր պայման է անձի ինքնակառավարման մակարդակի բարձրացման համար:

Հարմարման կառուցվածքային ճկունությունը դիտարկվում է որպես սոցիալ-հոգեբանական համակարգի և սեռային գործոնի իրավիճակային փոխհամաձայնություն և փոխկապակցություն, սեյսմապաշտպանության վարքականոնների իմացությունը իջեցնում է տագնապի աստիճանը, փոքրացնում ապահարմարման ռիսկը, նպաստում նյարդահոգեկան կայունացմանը, որը և բերում է երկրաշարժի նկատմամբ հոգեբանական պատրաստվածության:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտակարգ իրավիճակներում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման վերաբերյալ նախկինում եղած գիտական մոտեցումներն ու հայեցակարգային դրույթները (Մ. Պ. Մկրտումյան, Յու. Ա. Ալեքսանդրովսկի և այլք):

Հետազոտման օբյեկտ են հանդիսացել երկրաշարժի նկատմամբ սոցիալ-հոգեբանական խոցելիության նվազեցման գործում անձի իրազեկման/ուսուցման/ գործընթացի առանձնահատկությունները:

Հետազոտման առարկան անձի հոգեկան որակների հարմարվողականության, սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, դեզադապտացիայի ռիսկի, տագնապայնության մակարդակի փոխկապակցությունն է՝ տրվող հրահանգների կիրառման օգտակարության գնահատման համակարգում:

Հետազոտության նպատակն է տեսանելի դարձնել երկրաշարժի նկատմամբ սոցիալ-հոգեբանական խոցելիության հոգեկան տարրերը՝ այդ խոցելիությունը նվազեցնող ուղիներ մշակելու միտումով:

Հետազոտության խնդիրներն են.

1. Մասնագիտական գրականության վերլուծության միջոցով համակարգել երկրաշարժի նկատմամբ սոցիալ-հոգեբանական խոցելիության մոտեցումները և գնահատման մեթոդոլոգիական սկզբունքները:
2. Վերլուծաբար մատնանշել երկրաշարժի հետևանքով մարդկանց մեջ ի հայտ եկող հոգեբանական երևույթները, որոնք բնութագրում են անձի ինքնակարգավորման մակարդակը և համապատասխանում տվյալ իրավիճակում գործունեության պահանջներին:
3. Ընտրել հոգեբանական մեթոդներ, որոնք առավել ճշգրիտ են գնահատում անձի հետազոտվող որակների արտահայտվածության աստիճանը:
4. Վեր հանել հետազոտվող անձնային որակների և տրվող հրահանգների միջև եղած էական կապերը:

Ռեսուլտատների մեթոդները որոշվել են՝ ելնելով վերջինիս իրականացման հիմնական խնդիրներից և փուլերից: Հետազոտության թվարկված խնդիրներն իրագործելու համար ընտրվել են հարցաթերթի, արխիվային վերլուծության, թեստավորման և վիճակագրական վերլուծության մեթոդները:

Ստացված արդյունքների հավաստիությունն ապահովվել է հետազոտական ընթացակարգերի և հնարքների բազմազանությամբ, նրանց փոխկապակցվածությամբ, փոխլրացվողականությամբ, ինչպես նաև տվյալների մշակման և վերլուծության վիճակագրական մեթոդներով: Երկրաչարժի սոցիալ-հոգեբանական խոցելիության երևույթի ուսումնասիրման փուլում օգտագործվել են տեսական վերլուծության մեթոդը և հատուկ գրականության ընդհանրացված տվյալները, փաստաթղթերը, փորձագետների հետ հարցազրույցները և բնակչության շրջանում անցկացված հարցումները: Թեստավորման շրջանում մեծ ուշադրություն է դարձվել հետազոտվողների անհրաժեշտ չափանիշների որակական հսկողության կազմակերպման վրա:

Հետազոտության կազմակերպումն իրականացվել է՝ ելնելով դրված խնդիրների լուծման առանձնահատկություններից: Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայություն (ՍՊԾ) համակարգի 4 ՊՈԱԿ-ների՝ բնակչության հետ տարվող աշխատանքների բաժինների աշխատակիցների, «Ուրարտու» համալսարանի հոգեբանության բաժնի ուսանողների, «Սթրես» հոգեկան առողջության կենտրոնի աշխատակիցների աջակցությամբ: Հետազոտությանը մասնակցել են 3000 տարբեր տարիքի, սեռի, կրթության, սոցիալական կարգավիճակի անձինք, որոնք բնակվում են ՀՀ և ԼՂՀ տարածքների քաղաքներում և գյուղերում:

Գիտական նորույթը: Բազմակողմանիորեն և երկարատև (2006-2011թթ.) ուսումնասիրվել է երկրաչարժի նկատմամբ անձի սոցիալ-հոգեբանական հարմարումը՝ կախված պատրաստվածության մակարդակից, և այդ գործընթացում տարիքային, սեռային առանձնահատկությունների դրսևորումը հենց երկրաչարժի ժամանակ: Ցույց է տրվել հոգեկան որակների փոխկապակցությունը, որը երկրաչարժի նկատմամբ հոգեբանական պատրաստվածության կարևոր պայման է:

Հարմարման (ադապտացիայի) խնդիրը դիտարկվել է ձկունության և պատրաստվածության տեսանկյունից, որն ապահովում է նյարդահոգեկան կայունություն, սթրեսկայունություն և ենթադրում վերջիններիս փոխկապակցվածությունն ու փոխլրացվողականությունը:

Տեսական նշանակությունը: Ատենախոսությունը ներառում է տեսական ընդհանրացումներ, մեկնաբանումներ՝ սոցիալ-հոգեբանական հարմարման վրա արտակարգ իրավիճակների ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև այդ ազդեցության բնույթի՝ տարիքային, սեռային առանձնահատկություններից կախված լինելու մասին: Հիմնախնդրի հիմնադրույթային մշակումները և մատնանշված սոցիալ-հոգեբանական օրինաչափություններն էապես հարստացնում են արտակարգ իրավիճակներում հարմարման ընդհանուր վերլուծությունները, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության, տարիքային, սեռային օրինաչափությունների սոցիալ-հոգեբանական հիմնադրույթները:

Գործնական ուղղվածությունը: Սեյսմապաշտպանության վարքականոսների նորովի մշակած իրահանգների մատուցման եղանակը նպատակաուղղված է անձի հոգեբանական պատրաստվածությանը, որի կառուցվածքում նախ նկարագրվում են երկրաչարժի ժամանակ անձի գործունեության արդյունավետության ցուցանիշները (փորձագետների գնահատականները և անձնական գործերի բովանդակային վերլուծությունը),

այնուհետև զնահատվում են հրահանգներից հետո անձի մոտ ուսումնասիրվող հոգեկան որակները, որոնք միտում ունեն բարձրացնելու հոգեբանական պատրաստվածությունը:

Գործնական նշանակությունը: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել բնակչության իրազեկման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև բնակչության հետ աշխատող անձնակազմի մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ասպարեզներում: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել արտակարգ իրավիճակներում գործունեություն իրականացնողներին, նրանց հիմնախնդիրներն ուսումնասիրողներին:

Ատենախոսության տեսական դրույթները և հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել «Սոցիալական հոգեբանության», «Արտակարգ իրավիճակների հոգեբանության», «Բժշկական հոգեբանության» դասընթացներում:

Տեսական և գործնական դրույթների հուսալիությունը և հիմնավորվածությունը ապահովված են հիմնահարցի վերաբերյալ տեսական մոտեցումների և մեթոդաբանության ուսումնասիրմամբ, հետազոտության նպատակներին համապատասխանող մեթոդների և մեթոդիկաների ընտրությամբ, աշխատանքի վերլուծության յոթ տարվա տևողությամբ, ուսումնասիրվող համակազմի քանակով, հետազոտության տվյալների հոգեբանական և մաթեմատիկական մշակման հուսալի համակարգով:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Անձի սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմների առանձնահատկությունները պայմանավորված են անձի պատրաստվածության, սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, տազնապայմանության մակարդակով:
2. Բնակչության արդյունավետ գործելու վարքի մոդելը արտակարգ իրավիճակներում (երկրաշարժ) հիմնված է նախորդ փորձի, իրազեկվածության և իրական կարգավիճակի ճշգրիտ գնահատման կարողության վրա:
3. Հարմարման ճկունության կառուցվածքային միավորներ են սոցիալ-հոգեբանական, անձնային, տարիքային և սեռային գործոնները և դրանց փոխկապվածությունը:
4. Անձի վերը նշված հոգեկան որակների համալիր փոխկապակցվածությամբ է պայմանավորված երկրաշարժի նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության նվազեցման գործընթացը:
5. Սթրեսակայունությունը, նյարդահոգեկան կայունությունը, տազնապայմանությունը, ապահարմարման (դեզադապտացիայի) ռիսկը անձի հոգեբանական պատրաստվածության կարևոր բաղադրիչներ են, որոնք, որպես հարմարման կարևոր մեխանիզմ, կապված են տրվող հրահանգների կիրառման օգտակարության գնահատման գործընթացի հետ:

Հետազոտության փորձագիտություն: Աշխատանքի գիտագործնական դրույթները ներկայացվել են զեկուցումների և հրատարակումների ձևով

Գյուճարում՝ ՀՀ ԳԱԱ ԵԻՍԻ հիմնադիր, ակադ. Ա. Գ. Նազարովի ծննդյան 100-ամյակին նվիրված «Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության արդի հիմնախնդիրները» խորագրով գիտաժողովում (2008թ. հոկտ. 7-11), ԵՊՀ Երկրաբանության ամբիոնի կողմից կազմակերպված պրոֆ. Պ. Ս. Բոշնալյանի ծննդյան 90-ամյակին նվիրված «Կիրառական երկրաբանության և աշխարհագրության արդի հիմնահարցերը» վերնագրով գիտաժողովում (2010թ. նոյեմբ. 18-19), ՀՀ ԱԻՆ աշխատակազմի «ՍՊԾ» գործակալության կողմից կազմակերպված՝ Սպիտակի 1988թ. երկրաշարժի 23-րդ տարելիցին նվիրված «Հայաստանի սեյսմիկ անվտանգության հիմնախնդիրները» անվամբ միջազգային գիտաժողովում (2011թ. դեկտ. 5-6), ՀՀ ԱԻՆ աշխատակազմի «ՍՊԾ» գործակալության, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության հետազոտական խմբի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Աղետների ռիսկի նվազեցման կրթության նորարարական մոտեցումները Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական ծրագրերում» (Ուսուցման կազմակերպումը դարոցներում. Հայաստանի և Ճապոնիայի փորձը) աշխատանքային քննարկմանը (2012թ. հոկտ. 12): Հետազոտության նյութերը և արդյունքները քննարկվել են Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության և սոցիալական աշխատանքի ֆակուլտետի տեսական սեմինարներում (2009, 2011թթ.) և հոգեբանության ամբիոնում:

Աշխատանքն իրականացվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում, ՀՀ ԱԻՆ «ՍՊԾ» գործակալությունում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, զրականության ցանկից (133 աղբյուր) և հավելվածից (18):

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 180 էջ (ներառյալ հավելվածները):

Ներկայացված են 49 աղյուսակ, 19 նկար:

ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրներն ու տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին ***«Երկրաշարժի հոգեբանական հետևանքները որպես գիտական հետազոտության հիմնախնդիր»***, գլխում հիմնավորվել են անձի «անվտանգություն», «հուսալիություն» և «հարմարում» հասկացություններն իրենց արժեքային բնորոշումներով և հոգեբանության մեջ վերջիններիս հնարավոր հարաբերակցությամբ:

Այս տեսանկյունից ենք փորձել գնահատել անձի վարքն ու արտակարգ իրավիճակներում վերջինիս հոգեբանական հարմարման առանձնահատկությունները:

Ներկայացրել ենք երկրաշարժի հետևանքով առաջացող սոցիալ-հոգեբանական ասպեկտները, որտեղ խոսել ենք հոգեբանական, հոգեախտաբանական երևույթների, աղետների (երկրաշարժ) կառավարման մեխանիզմների մասին: Առանձնահատուկ շեշտադրում ենք կատարել ԱՄՆ-ում գործող իրազեկման առանձնահատկությունների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«երկրաշարժի հետևանքով առաջացած վարքային դրսևորումների հիմնախնդրի վերլուծություն»**, գլխում ներկայացրել ենք երկրաշարժի ժամանակ տեղ գտած անձի վարքի ձևերի, հատկապես առավել ծանր հետևանքներից՝ կորստի հոգեբանական վերլուծությունը:

Շատ հաճախ արտակարգ իրավիճակները ստեղծում են այնպիսի պայմաններ որոնցում խիստ դժվար է լինում մեկնաբանել անձի վարքը: Այն փոխակերպվում է կախված իրավիճակի էքստրեմալության աստիճանից և խանգարում մարդու սովորական կենսագործունեությունը, ինչպես նաև անձին ստիպում ստեղծված իրավիճակում անհապաղ հարմարվել: Այսպիսի պայմաններում խախտվում է «օրգանիզմ-միջավայր» համեմատաբար կայուն համակարգը և անձի մտաբեկությունն իր ու իր հարազատների առողջության նկատմամբ դառնում է գերխնդիր՝ կապված անբարենպաստ պայմաններում կենսագործունեության պահպանման հետ: Մյուս կողմից համատարած դժվարությունները սահմանափակում են անձի դրսևորման շրջանակները:

Հոգեբանական պատրաստվածության բացակայության դեպքում, իրավիճակի հանկարծակիությունը աֆեկտիվ վարքի առաջացման պատճառներից մեկն է: Արտակարգ իրավիճակներում վարքի ձևերը կախված են անձի հոգեբանական պաշտպանության և սուբյեկտիվ ղեկավարման մակարդակից:

Երկրաշարժն առաջ է բերում օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական բնորոշ տեղաշարժեր, որոնց մի մասն օրգանիզմի կողմից ցուցաբերվող բնական պաշտպանական հակազդումներն են, որոնք որոշ ժամանակ անց բնական հարմարվողական գործընթացում կա՛մ վերանում են, կա՛մ էլ իրենց տեղը զիջում ավելի հզոր գործոնների ազդեցության հետևանքով օրգանիզմի նոր հոգեֆիզիոլոգիական ռեակցիաների դրսևորմանը: Ամիջապես կորստից հետո առաջանում են սուր վշտի հակազդումներ, որոնք կարող են նաև հետաձգվել: Վշտի հակազդումները դրսևորվում են հոգեբանական և մարմնական ախտանիշներով: Սուր վշտի հակազդումները նորմալում կախված են մարդու կորստին համակերպվելու և այն ընդունելու ունակությունից: Եթե վիշտը չի անցնում իր դրսևորման համար անհրաժեշտ փուլերը, ապա կարող է ի հայտ գալ իր պաթոլոգիկ դրսևորման ձևերով: Արտակարգ պայմաններում անձի ընդհանուր առողջությունը, նրա գործունեության արդյունավետությունը, հոգեկանի հուսալիությունը և արգելադիմացկունությունը սերտորեն կապված են այն հանգամանքի հետ, թե որքանով է անձը ճիշտ գնահատում փոփոխված պայմանները, ինչպես է այն կարևորում իր անձի համար, ինչքանով է տիրապետում հոգեկարգավորման հնարքներին և ինչպես է վերահսկում նրանց փոփոխությունների տեղաշարժը: Մարդու վարքը պայմանավորված է խոսքային այն հրահանգներով, որոնք նա ստանում կամ տալիս է ինքն իրեն այս կամ այն փորձությունից առաջ: Այստեղից հետևում է, որ վարքային ակտիվության

անհատական տարբերությունները, իրականացվում են անձի «հոգեբանական պատրաստվածության» սկզբունքով ուղղված արտակարգ գործոնների նկատմամբ գործողությամբ:

Ներկայացվում են նաև մոտեցումներ, համաձայն որոնց անհատի գործունեության արդյունավետությունն արտակարգ իրավիճակներում որոշվում է այնպիսի հոգեբանական որակների արտահայտվածության աստիճանով, ինչպիսիք են պատրաստվածությունն ու հարմարվողականությունը, շնորհիվ որոնց ապահովվում է անձի ինքնակարգավորման օպտիմալ մակարդակը: Առանձին ենթավերնագրով խոսվում է արտակարգ իրավիճակներում անձանց կողմից կատարվող գործողությունների և նրանց հետ տարվող հոգեշտկման նախապատրաստական աշխատանքների բնույթի, առանձնահատկությունների մասին:

Ատենախոսության երրորդ **«Երկրաչարժի նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության գնահատման հոգեբանական միջոցների և հետազոտական ուսումնասիրությունների իրականացում»** խորագրով, գլխում տեղ են գտել ողջ փորձարարական մասի տվյալներն ու դրանց վերլուծությունը:

Հետազոտության հիմնական մեթոդները: Մեր հետազոտության վարկածի փորձարարական ստուգման համար կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները՝

1. Թ. Հոլմսի «Սթրեսում դեգադացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության արտահայտման մեթոդիկա»,
2. Թեյլորի տագնապախոշոտության չափման մեթոդիկա,
3. Թ.Հոլմսի և Ռ.Ռահեի «Սթրեսակայունության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկա»,
4. Միննոյն ժամանակ կիրառել ենք հարցաթերթի, վիճակագրական վերլուծության մեթոդները:

Հետազոտության փորձարարական մասի վերլուծությունը:

Կազմակերպվել և պարբերաբար իրականացվել են թեստավորման աշխատանքներ, որոնք սկսվել են 2006 թվականից: Ստացված արդյունքների հիման վրա կատարվել է թեստերի արդյունքների հարաբերակցական վերլուծություն: Մեթոդիկայի արդյունավետության ստուգման նպատակով հետազոտական աշխատանքներ են իրականացվել. նախ լսարանին տրվել են նշված երեք թեստերը, հետո ուսուցանվել վարքականոնները: Մեկ ամիս անց նորից նույն լսարաններում անցկացվել են նույն թեստերը:

Ընդհանրացնելով ստացված տվյալները՝ տեսնում ենք, որ սեռային գործոնն առանձին տարիքային խմբերում և քաղաքներում դրսևորվում էր տարբեր ցուցանիշներով, սակայն ամբողջական վերլուծությունը ցույց է տալիս, որ էական տարբերություն կապված սեռային գործոնի հետ, չկա: Ներկայացված մեթոդիկան արդյունավետ է երկու սեռերի համար էլ:

Առանձին հետազոտման ենք ենթարկել ուսումնասիրվող հոգեկան որակների միջև փոխալայմանավորվածությունը և փոխկապակցվածությունը՝ փորձելով պարզել դրանց անմիջական ազդեցությունը մեկը մյուսի վրա՝ կախված առաջարկվող մեթոդիկայի արդյունավետ կիրառումից: Ստացված վերլուծությունը իրականացրել ենք հատուկ մաթեմատիկական մեթոդիկայի կիրառման միջոցով:

Հարաբերակցական վերլուծության շնորհիվ հետազոտվող թեստերի միջոցով բացահայտվեց, որ նյարդահոգեկան կայունությունն անմիջականորեն

փոխկապակցված է սթրեսակայունության և սոցիալական հարմարման հետ: Հարաբերակցական վերլուծության են ենթարկվել սթրեսակայունությունը, տազնապայմանությունը, նյարդահոգեկան կայունության գործակիցները՝ ըստ չափող մեթոդիկաների: Հաշվարկվել է Պիրսոնի գծային հարաբերակցական գործակիցը $N=78$ -ի համար, $0,05$ -ից բարձր նշանակալիությամբ:

$$r_{xy} = \frac{\sum_{i=1}^n (x_i - M_x) \sum_{i=1}^n (y_i - M_y)}{\sqrt{\sum_{i=1}^n (x_i - M_x)^2 \sum_{i=1}^n (y_i - M_y)^2}}$$

Արդյունքների վերլուծությունը բացահայտեց հետևյալ օրինաչափությունը: Ըստ ստացված արդյունքների՝ Երևանի և Կապանի հետազոտվողների թեստային սովալներում հարաբերակցական ուղիղ փոխապայմանավորվածություններ են ի հայտ եկել միայն սթրեսակայունության և նյարդահոգեկան կայունության գործոնների ցուցանիշների միջև: Սակայն այդ ցուցանիշները խիստ արտահայտված չեն:

երեմաս **ԿԱՊԱՆ** **Աղյուսակ N 2**

	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
Տազնապայմանություն	0,021	0,161
Սթրեսակայունություն		0,458

	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
Տազնապայմանություն	0,104	0,075
Սթրեսակայունություն		0,482

$p < 0,001$ նշանակալիությամբ $r > 0,361$

Ինչպես տեսնում ենք, Երևան քաղաքի համար $r=0,458$, իսկ Կապանի համար՝ $r=0,482$. այս ցուցանիշները խիստ արտահայտված չեն, չնայած առկա է փոխապայմանավորվածություն:

Այլ է պատկերը Ստեփանակերտի և Գյումրու հետազոտվողների համար: Բոլոր երեք գործոնների միջև՝ տազնապայմանություն, սթրեսակայունություն և նյարդահոգեկան կայունություն, հայտնաբերվել են հարաբերակցական ուղիղ փոխկապակցվածություններ, ընդ որում, Գյումրու հետազոտվողների մոտ գործակիցներն ավելի արտահայտված են, ինչը խոսում է առավել նշանակալի փոխկապակցվածությունների և փոխապայմանավորվածությունների մասին:

Առանձնացնելով Գյումրին՝ պետք է նշենք, որ երեք գործոններն էլ փոխկապակցված էին, սակայն սթրեսակայունությունն ու նյարդահոգեկան կայունությունը ցույց տվեցին հարաբերակցականության ամենաբարձր ցուցանիշ $r=0,510$: Այստեղ տեղին է փաստել, որ աղետի հետևանքներն իրենց ազդեցությունն են թողել մինչև օրս:

ՍՏԵՓՆԱԿԵՐՏ **Աղյուսակ N 3** **ԳՅՈՒՄՐ** **Աղյուսակ N 4**

	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
Տազնապայմանություն	0,251	0,291
Սթրեսակայունություն		0,433

	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
Տազնապայմանություն	0,494	0,310
Սթրեսակայունություն		0,510

$p < 0,05$ նշանակալիությամբ $r > 0,220$


$p < 0,001$ նշանակալիությամբ $r > 0,361$

Հետազոտվող չորս քաղաքների ցուցանիշները տարբերվում են և ցույց տալիս, որ յուրաքանչյուր քաղաք, պայմանավորված իր աշխարհագրական դիրքով, սոցիալ-տնտեսական, քաղաքական գործոններով, ներկայացնում է բավականին տարբեր ցուցանիշներ, ինչպես նաև միջին գործակիցներ: Հատկանշական է աղետի գոտին, որը միանգամից առանձնացավ հարաբերակցական փոխապայմանավորվածությունների արտահայտման մակարդակով: Ստորև ներկայացվում են հետազոտվող երեք թեստերի տվյալների գրաֆիկական պատկերները, որոնք ցույց են տալիս, թե ինչ ցուցանիշներ են գրանցվել մինչև ուսուցումը և ինչ ցուցանիշներ՝ մեթոդիկայի կիրառումից հետո: Համեմատական վերլուծությունը թույլ է տալիս փաստել առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը: Ներկայացված են նաև միջինացված արժեքները դիսպերսիաներով, այսինքն՝ շեղման աստիճանով:


Նախնական տվյալների համաձայն՝ Երևանում տազնապայնությունը համապատասխանում էր բարձր մակարդակին (25-40), իսկ հետո՝ բարձրի միտումով միջին մակարդակի (15-25), որը փաստում է տազնապայնության իջեցման մասին: Սթրեսակայունությունը սկզբնական և վերջնական ցուցանիշներով էական փոփոխության չի ենթարկվել, այսինքն՝ համապատասխանում է սահմանային մակարդակին (200-299): Նյարդահոգեկան կայունությունը սկզբում դիտարկվեց ՆՀԿ-ի պայմանական սանդղակի ցածր ցուցանիշով (29-32,=2), այսինքն՝ նյարդահոգեկան թույլ կայունություն և ապահարմարման մեծ ռիսկ, իսկ հետո՝ համեմատաբար ավելի կայուն վիճակ (23-28, =3):

Կապանից ստացված տվյալների համաձայն՝ սկզբում գրանցվել է տազնապայնության բարձր մակարդակ (25-40), իսկ հետո՝ բարձրի միտումով միջին մակարդակ (15-25): Սթրեսակայունությունը և՛ սկզբում, և՛ վերջում գրանցվել է քիչ տարբերություններով սահմանային մակարդակում (200-299): Նյարդահոգեկան կայունությունը սկզբում համապատասխանել է ՆՀԿ-ի պայմանական սանդղակի ցածր ցուցանիշներին (29-32,=2), իսկ հետո դիտարկվել է ցուցանիշների բարելավում (23-28, =3): Ինչպես տեսնում ենք, այս երկու քաղաքներում տվյալներն իրար նման են, որը փաստում է մեթոդիկայի կիրառման արդյունավետություն՝ անկախ տարածքային առանձնահատկություններից:


Գծապատկեր 1. Թ. Հովսեփի և Ռ. Ռահեի սթրեսակայունության և սոցիալական ազապտացիայի բացահայտման մեթոդիկա



Գծապատկեր 2. Թ. Հովսի «Մթնոսմ դեգրադացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկա»



Գծապատկեր 3. Թեյլորի տագնապայտություն չափման մեթոդիկա



Աղյուսակ N 5

ԵՐԵՎԱՆ		Տագնապայտություն	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
սկզբում	միջինարժեք	29,18	260,93	30,62
	ստ.քառ.շեղում	10,3	66,2	6,7
վերջում	միջինարժեք	24,82	217,12	24,43
	ստ.քառ.շեղում	11,6	51,6	6,2

Աղյուսակ N 6

ԿԱՊԱՆ		Տազնապայնություն	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
սկզբում	միջինարժեք	29,13	284,89	31,32
	ստ.քառ.շեղում	7,2	67,3	4,1
վերջում	միջինարժեք	18,29	225,88	23,45
	ստ.քառ.շեղում	6,1	51,1	3,9

Աղյուսակ N 7

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ		Տազնապայնություն	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
սկզբում	միջինարժեք	23,33	274,25	29,36
	ստ.քառ.շեղում	9,3	81,1	4,9
վերջում	միջինարժեք	13,84	215,21	22,87
	ստ.քառ.շեղում	6,4	51,7	3,9

Աղյուսակ N 8

ԳՅՈՒՐԻ		Տազնապայնություն	Սթրեսակայունություն	Նյարդահոգեկան կայունություն
սկզբում	միջինարժեք	29,93	301,47	32,45
	ստ.քառ.շեղում	8,4	57,5	3,8
վերջում	միջինարժեք	17,75	229,79	24,00
	ստ.քառ.շեղում	6,2	50,9	3,5

Ստեփանակերտ քաղաքի հետազոտվողների տվյալներն ունեին հետևյալ պատկերը: Տազնապայնության մակարդակը սկզբում, ի տարբերություն նախորդ երկու քաղաքների, գրանցվեց 15-25, որը խոսում է տազնապայնության բարձր միտումով միջին մակարդակի մասին, իսկ հետո դիտարկվեց ցածրի միտումով միջին մակարդակ (5-15): Սթրեսակայունությունը երկու դեպքում էլ համապատասխանում է սահմանային մակարդակին (200-299), սակայն կա մի նրբություն. եթե սկզբում միջին արժեքը =274,25, ապա հետո այն =215,21: Նյարդահոգեկան կայունությունը համապատասխանում էր սկզբում ՆՀԿ-ի պայմանական սանդղակի ցածր ցուցանիշներին (29-32,=2), իսկ հետո դիտարկվեց ցուցանիշների կրկնակի բարելավում (18-22, =4):

Գյումրու հետազոտվողների ցուցանիշներն ունեին հետևյալ պատկերը. տազնապայնությունը սկզբում համապատասխանում էր բարձր մակարդակին (25-40), իսկ հետո՝ բարձրի միտումով միջին մակարդակին (15-25): Սթրեսակայունությունը էական փոփոխման է եթարկվել. սկզբում այն համապատասխանում էր սթրեսակայունության ցածր (300 և ավելի), իսկ հետո սահմանային (200-299) մակարդակին: Նյարդահոգեկան կայունությունը սկզբում

ցույց տվեց $N < 4$ պայմանական անդղակի 29-32, =2 ցուցանիշ, իսկ հետո՝ ավելի բարձր նյարդահոգեկան կայունություն՝ 23-28, =3 ցուցանիշ:

Անփոփելիվ՝ պետք է նշենք, որ հետազոտվող բոլոր չորս քաղաքներում դիտարկվեց ցուցանիշների բարելավում, որը մեզ թույլ է տալիս եզրահանգել առաջարկվող մեթոդիկայի արդյունավետության մասին:

Առկա տարբերությունների գիտական հավաստման նպատակով հաշվարկվել է նաև Ստյուդենտի t-չափանիշը, $p < 0,001$; $St > 3.46$:

$$t = \frac{|M_d|}{s_d / \sqrt{n}}$$

Ստացված գործակիցները բավարարում են 0.999 սխալի հավանականությանը:
Սղյուսակ N 9

Երևան	T-Test	Կապան	T-Test	Ստեփանակերտ	T-Test	Գյումրի	T-Test
Տազնապայնություն	7.77	Տազնապայնություն	29.19	Տազնապայնություն	20.23	Տազնապայնություն	26.04
Սթրեսակայունություն	10.71	Սթրեսակայունություն	16.36	Սթրեսակայունություն	11.37	Սթրեսակայունություն	16.72
Նյարդահոգեկան կայունություն	21.55	Նյարդահոգեկան կայունություն	21.59	Նյարդահոգեկան կայունություն	18.14	Նյարդահոգեկան կայունություն	29.21

Ընդհանրացնելով հետազոտական ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է ասել, որ բնակչության մոտ արդեն իսկ զգալի են նյարդահոգեկան կայունության, սթրեսակայունության և տազնապայնության հետ կապված խնդիրներ, որոնք հանգեցնում են սոցիալ-հոգեբանական հարմարվողականության դժվարությունների առաջացման և բերում ապահարմարման ռիսկի մեծացման: Պարզ է, որ բնակչությունը, որը գտնվում է վերը նշված վիճակում, միանշանակ երկրաշարժի նկատմամբ սոցիալ-հոգեբանորեն խոցելի կլինի: Իսկ, որպեսզի խուսափենք ծանր հետևանքներից, անհրաժեշտ է որոշակի միջոցառումների օգնությամբ նվազեցնել բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիությունը բացասական իրավիճակների հանդեպ: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ավելացնել կանխարգելիչ աշխատանքների քանակն ու որակը:

Սոցիալ-հոգեբանական խոցելիությունն անմիջականորեն կապված է բնակչության հարմարվողականության առանձնահատկությունների՝ մասնավորապես ինքնակարգավորման հնարքների տիրապետման, հոգեկարգավորման առանձնահատկությունների հետ: Այդ նպատակով առաջարկում ենք մեթոդիկա, որի կիրառման դեպքում կարելի է մեղմացնել երկրաշարժի ժամանակի հայտ եկող հոգեբանական վնասվածքը: Առաջարկում ենք նաև հոգեբանական նրբություններ, որոնք պետք է կիրառել ուսուցման, իրագեկման գործընթացի կազմակերպման և սեյսմապաշտպանության վարքականոցների կիրառման ժամանակ: Այսպիսով՝ առաջարկում ենք ուսուցման մեթոդիկա, որի նորությունը հետևյալն է.

- ընտրված հրահանգները հակիրճ են,
- համապատասխան շեշտադրումներ են արվում,
- զերծ են ավելորդ տեղեկություններից,

- ուղղված են ինքնուրույն գործելու կարողություններ ունեցող մարդկանց,
 - կարելի է ուսուցանել՝ կիրառելով գովազդային պաստառները, վազող տողերը:
- Բուն մեթոդիկայի կիրառման մեջ առանձնացնում ենք.
- Ուսուցման փուլայնություն. ուսուցումից հետո կազմակերպվում է տազնապ-վարժանք:
 - Տազնապ-վարժանքից հետո ուսուցանվածների այցելություն սեյսմիկ պաշտպանության ծառայություն և տեղում ծանոթացում սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված աշխատանքներին:
 - Ուսուցման պարբերականություն. ցանկալի է տարվա մեջ մի քանի անգամ կրկնել:

Սրանք այն առանձնահատկություններն են, որոնք մենք առաջարկում ենք տվյալ մեթոդիկայում:

Հետազոտական աշխատանքի ընթացքում մենք առաջադրել էինք հարցաթերթ, որի նպատակն էր պարզել բնակչության պատկերացումները, դիրքորոշումները երկրաշարժ երևույթի նկատմամբ, ինչպես նաև կատարել ենք հարցումներ և վերլուծել ավելի քան երկու հազար հարց, որոնք միջոցով կարողացանք ամբողջականացնել բնակչության շրջանում երկրաշարժ երևույթի վերաբերյալ դիրքորոշումները: Համաձայն ստացված տվյալների՝ իգական և արական սեռերի միջև էական տարբերություն նկատվեց երկրաշարժի նկատմամբ պատկերացումների մեջ և, ամենակարևորը, երկրաշարժին դիմակայելու դիրքորոշումներում: Այսպես իգական սեռի համար կարևորը գործողություններն են, որոնք կարող են կատարել երկրաշարժի ժամանակ իրենց կյանքն ու առողջությունը չվտանգելու համար, իսկ արականի համար՝ իրենց բնակարանների հնարավորինս սեյսմակայուն վիճակը: Վերջիններիս հետաքրքրում էին նաև երկրաշարժերի կանխատեսման վերջին գիտական նորությունները: Ինչպես տեսանք, սեռային գործոնն իր ազդեցությունն ունի երկրաշարժի նկատմամբ պատկերացումների և դիրքորոշումների ձևավորման մեջ: Իսկ ինչ վերաբերում է հոգեբանական հարմարվողականությանը և սթրեսակայունությանը, ապա կատարված թեստային ուսումնասիրությունները մեզ թույլ են տալիս փաստել, որ դրանց վրա սեռային և տարիքային գործոններն էական ազդեցություն չունեն: Այստեղ կարևոր են հետազոտվողի նյարդահոգեկան կայունության, տազնապայնության, սթրեսակայունության ցուցանիշները, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ նյարդահոգեկան ցածր կայունությունը պայման է հանդիսանում ապահարմարման ռիսկի մեծացման, սա էլ իր հերթին բերում է հոգեբանական հարմարվողականության նվազեցման և, հետևաբար, արտակարգ իրավիճակում ինքնակառավարման մակարդակի նվազեցման: Այս հանգամանքը կախված չէ սեռային և տարիքային գործոնից: Տազնապայնության մակարդակը հետազոտվող խմբերում նորմայից բարձր էր, որն էլ թույլ է տալիս փաստել, որ տազնապայնությունը, որպես գործոն, ազդում է արտակարգ իրավիճակում համապատասխան վարքի մոդելի կիրառման հավանականության վրա, դրանով սպառնում արտակարգ իրավիճակում մարդու հոգեբանական հարմարվողականությանը: Բայց, ինչպես տեսանք, մեթոդիկայի կիրառման պարագայում տազնապայնության ցուցանիշները բավականին բարելավվում էին, որը խոսում է արտակարգ իրավիճակում անձի

ինքնակառավարման մակարդակի բարձրացման հավանականության մասին: Իսկ սթրեսակայունությունը, որպես գործոն, պայմանավորված է նյարդահոգեկան կայունության, տազնապայնության և հենց սթրեսակայունության ցուցանիշներով, որոնց բարելավված փոփոխության պարագայում դիտարկվում է բարձր սթրեսակայունություն և սոցիալական հարմարում, որն էլ բերում է հոգեբանական հարմարվողականության մեծացման:

Այսպիսով՝ կատարված գործնական հետազոտությունը հնարավորություն է տալիս կատարելու ստորև բերվող ամփոփումները, որոնց հիմքով կարելի է կառուցել եզրակացությունների համակարգ:

- Թեստերի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ բնակչության շրջանում նյարդահոգեկան կայունությունը, սթրեսակայունությունը, տազնապայնությունը համընկնում են սահմանային մակարդակին, որի հետևանքով հնարավոր երկրաշարժի ժամանակ ապահարմարման ռիսկը բավականին բարձր կլինի: Միաժամանակ, չնայած տարածաշրջանների միջև եղած էական տարբերությանը, վտանգը բոլորի համար էլ հրատապ խնդիր է:
- Պարզվեց, որ Գյումրին, հանդիսանալով աղետ տեսած տարածաշրջան, քսաներեք տարի անց դեռ իր բնակչության հոգեկան ոլորտում կրում է Սպիտակի երկրաշարժի թողած հոգեկան բացասական դրսևորումները և իր բնակիչների հոգեբանական առանձնահատկություններով առանձնանում է մյուս տարածաշրջաններից:
- Հետազոտությունը բացահայտեց, որ մեթոդիկայի կիրառումը անկախ է սեռային գործոնից, հավասար ազդեցություն կարող է ունենալ տարիքային բոլոր խմբերում, եթե առկա է մատուցման համապատասխան ձև:
- Ուսումնասիրվող սթրեսակայունությունը, նյարդահոգեկան կայունությունը՝ լինելով հոգեբանական հարմարվողականության գործոններ, փոխկապակցված են և կարևոր պայման են հոգեբանական պատրաստվածության համար:

Առաջադրված գիտական վարկածը համարում ենք հաստատված: Ընդ որում՝ վարկածում նշված սեռային, տարիքային գործոնները էական ազդեցություն չունեն, իսկ սթրեսակայունությունը և հարմարվողականությունը փոխկապակցված են, ինչը հիմք է հանդիսանում անձի ինքնակառավարման մակարդակի բարձրացման համար:

Եզրակացություն

Տեսական և հետազոտական վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Տեսական վերլուծությունը թույլ տվեց որոշելու երկրաշարժի նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության և պատրաստվածության գնահատման չափանիշները՝ ելնելով անձի հոգեբանական անվտանգության, հուսալիության, հարմարվողականության ցուցանիշներից:
2. Երկրաշարժի վերաբերյալ արխիվային նյութերի, մի շարք հեղինակների (Ա. Կէօնձյան, Գ. Շահվերդյան, Ա. Թադևոսյան) տվյալները և մեր

ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ եթե չկա նախնական հոգեբանական պատրաստվածություն՝ սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, տազնապայնության հոգեկան որակների փոխկապակցությամբ, ապա դրսևորվում է կորստի, վշտի և այլ բացասական հոգեկան երևույթների առաջացման միտում:

3. Անձի՝ մեր կողմից նախանշված հոգեկան որակները՝ սթրեսակայունությունը, նյարդահոգեկան կայունությունը, տազնապայնությունը առաջադրում են երկրաշարժի ժամանակ անհատական հակազդման տիպեր և բնութագրում անձի ինքնակարգավորման ոլորտը:
4. Սպիտակի դասերն ուսումնասիրելը և Գյումրում իրականացված հետազոտության տվյալները թույլ տվեցին գալ եզրահանգման, որ երկրաշարժի ժամանակ բնակչության արդյունավետ գործելու վարքի մոդելը հիմնված է նախորդ փորձի, իրազեկվածության և իրական կարգավիճակի ճշգրիտ գնահատման կարողության վրա:
5. Արտակարգ իրավիճակում (երկրաշարժ) հարմարման ճկունության կառուցվածքային միավորը սոցիալ-հոգեբանական, անձնային գործոնների փոխկապակցությունն է, որում տարիքային և սեռային գործոնները նշանակալի ազդեցություն չունեն:
6. Երկրաշարժի նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության նվազեցման գործընթացը պայմանավորված է անձի հոգեկան որակների՝ սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, հոգեբանական հարմարվողականության համալիր փոխկապակցվածությամբ:
7. Հետազոտության արդյունքների հարաբերակցական վերլուծությունը թույլ տվեց եզրակացնել, որ երկրաշարժի ժամանակ սթրեսակայունությունը, նյարդահոգեկան կայունությունը, տազնապայնությունը, ապահարմարման ռիսկը, որպես հարմարման կարևոր մեխանիզմներ, կախված են տրվող հրահանգների կիրառման օգտակարության գնահատման գործընթացից:
8. Իրազեկման արդյունավետությունը, ի տարբերություն ճապոնիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում կիրառվող մեթոդիկաների (սոցիալական պայմաններ, սեյսմակայուն շինարարություն), մեր իրականությունում պայմանավորված է հոգեբանական պատրաստվածությամբ, որն ուժեղ երկրաշարժի ժամանակ թույլ կտա կիրառել դրան դիմակայելու անհրաժեշտ վարքականոններ:
9. Հետազոտության արդյունքների հարաբերակցական վերլուծության շնորհիվ տեսանելի դարձավ հետազոտվող սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, տազնապայնության և տրվող հրահանգների միջև գործող կապը:

Գործնական առաջարկներ

1. Կիրառված մեթոդների համալիրը կարող է լինել օպտիմալ միջոց՝ հոգեբանական պատրաստվածությամբ նպաստելու երկրաշարժին դիմակայման խնդրի լուծմանը:
2. Վարքականոնների վերաբերյալ առաջարկում ենք՝ բնակչության ամենատարբեր խմբերում դրանց մշտական իրազեկում և կիրառում պետական համապատասխան կառույցների աջակցությամբ:

3. «Արտակարգ իրավիճակների հոգեբանություն» առարկայի շրջանակներում կիրառելի և տարածելի հայ իրականության մեջ տեղ գտած հետազոտությունների արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Հ. Լ. Կիրակոսյան, «Երկրաշարժի նկատմամբ բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիությունը և դրա նվազեցման միջոցներն ու ուղիները», «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Ջանգակ-97 հրատ., Երևան, 2008թ., N 3-4, էջ117-126:
2. Հ. Լ. Կիրակոսյան, «Սեյսմիկ ռիսկի նվազեցման շրջանակներում անցկացված հոգեբանական հետազոտությունների որոշ տվյալներ», «Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության արդի հիմնախնդիրները» Գիտական աշխատությունների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Գյումրի, 2008թ., էջ 312-319:
3. Հ. Լ. Կիրակոսյան, «Բնակչության սոցիալ-հոգեբանական հարմարվողականության առանձնահատկությունները», Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Ջանգակ-97 հրատ., Երևան, 2010թ., N 1-2, էջ144-148:
4. Հ. Լ. Կիրակոսյան, «Երկրաշարժի նկատմամբ Երևանի և Արարատի դպրոցականների հոգեբանական պատրաստվածության համեմատական վերլուծություն», «Կիրառական երկրաբանության և աշխարհագրության արդի հիմնահարցերը» Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ. Երևան, 2011թ., էջ 338-342:
5. Ս. Ա. Սեդրակյան, Հ. Լ.Կիրակոսյան, «Երկրաշարժի հոգեբանական հետևանքները և դրսևորման առանձնահատկությունները», «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Ջանգակ-97 հրատ., Երևան, 2011թ., N 3-4, էջ150-154:
6. H. L. Kirakosyan, K. D. Geghamyan, «Earthquake behavior rules for disable people», 5th International conference on seismology and earhtquake engineering, 13-16 may 2007, Tehran-Iran, p. 608.

КИРАКОСЯН АСМИК ЛЕНДРУШЕВНА

ПУТИ УМЕНЬШЕНИЯ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ УЯЗВИМОСТИ НАСЕЛЕНИЯ ПО ОТНОШЕНИЮ К ЗЕМЛЕТРЯСЕНИЯМ

Автореферат диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 «Социальная психология, (межличностные отношения, семейная, групповая деятельность)».

Защита диссертации состоится 1-го апреля 2014г. в12:00 на заседании специализированного Совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена следующими положениями:

1. Особенности механизмов социально-психологической адаптации личности к чрезвычайным ситуациям обусловлены подготовленностью личности, его нервно-психологической устойчивостью и стрессоустойчивостью, а также уровнем тревоги.
2. Модель поведения продуктивной деятельности населения в чрезвычайных ситуациях (землетрясения) основана на предыдущем опыте, осведомленности и умении точно оценивать реальную ситуацию.
3. Структурными единицами гибкости адаптирования являются социально-психологические, личностные, возрастные и половые факторы и их взаимосвязь.
4. Комплексной взаимосвязанностью вышеизложенных психологических качеств личности обусловлен процесс уменьшения социально-психологической уязвимости населения по отношению к землетрясениям.
5. Стрессоустойчивость, нервно-психологическая устойчивость, тревожность, риск дезадаптации – важные составляющие психологической подготовленности личности, которые, как важный механизм адаптации, связаны с процессом оценки полезности применения данных инструкций.

Цель исследования:

Сделать видимыми психологические элементы социально-психологической уязвимости в отношении землетрясения с целью разработать пути сокращения этой уязвимости.

Научная новизна исследования.

Разносторонне и продолжительно (2006-2011гг.) исследовались социально-психологическая адаптация личности к землетрясениям, связанная с уровнем подготовленности, и проявления возрастных и половых особенностей в этом процессе. Также указана взаимосвязанность психических

качеств, что является важным условием психологической подготовленности к землетрясениям.

Проблема адаптации рассматривается с точки зрения гибкости и подготовленности личности, что обеспечивает нервнопсихическую устойчивость, стрессоустойчивость и предполагает их взаимосвязность и взаимодополняемость.

Основные задачи исследования:

1. Через анализ специальной литературы систематизировать подходы социально-психологической уязвимости к землетрясениям и методологические принципы оценки.
2. Указать психологические явления, проявляющиеся в людях вследствие землетрясения, которые характеризуют уровень самоорганизации личности и соответствуют требованиям поведения в данной ситуации.
3. Выбрать психологические методы, которые более точно оценивают степень проявленности исследуемых качеств личности.
4. Выявить существенные связи между исследуемыми личностными качествами и данными инструкциями.

Теоретическая и практическая значимость.

Диссертация включает теоретические обобщения, анализ влияния возрастных и половых особенностей на социально-психологическую адаптацию в чрезвычайных ситуациях. Результаты исследования могут быть полезны как для ведущих деятельность в чрезвычайных ситуациях, так и для исследователей, занимающихся аналогичными проблемами.

Достоверность результатов.

Достоверность результатов исследования обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе досконального анализа научных источников и экспериментальных данных исследования, обработанных соответствующими статистическими методами.

Апробация и внедрение.

Научно-практические положения работы были представлены в виде докладов и публикаций. Материалы и результаты исследования обсуждались на кафедре психологии и на теоретических семинарах (2009, 2011г.) факультета психологии и социальной работы университета Практической психологии и социологии «Урарту».

По теме диссертации опубликовано 6 статей.

Структура работы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений. Объем работы составляет 180 страниц (включая приложения, 49 схем, 19 рисунков, 133 источника литературы).

KIRAKOSYAN HASMIK LENDRUSH
WAYS TO REDUCE POPULATION SOCIAL AND PSYCHOLOGICAL
VULNERABILITY TO EARTHQUAKE

Thesis for a degree of candidate of psychological science in the speciality 19.00.03
“Social Psychology (interpersonal relationships, family, group activities)”.

The defense of the dissertation will be held on 1-st of April, 2014 at 12:00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: St. Tigran Metsi 17, 0010 Yerevan

SUMMARY

Urgency of the thesis research is conditioned by the following suggestions:

1. The peculiarities of social and psychological adaptation mechanisms of an Individual are conditioned by the Individual's preparation, stress resistance, nervous and mental stability and anxiety levels.
2. The efficient behavioral model of population in emergency situations (earthquake in particular) is based on the previous experience, knowledge and ability to clearly assess the actual status.
3. Constituent elements of adaptation flexibility are the Individual's social and psychological, age-related and gender factors and their interrelation.
4. The process of reduction of social and psychological vulnerability of population to earthquakes largely depends on the comprehensive interrelation of the abovementioned psychological qualities.
5. Stress resistance, nervous and mental stability, anxiety and disadaptation risk are important constituents contributing to Individual's psychological preparation.

Research Objectives:

Make visible psychological elements accounting for social and psychological vulnerability to earthquakes, intending to develop ways for its reduction.

Scientific novelty:

The researcher has made a long-term, versatile investigation on Individuals' social and psychological adaptation to earthquake depending on their level of preparation and demonstration of age and gender features in that process during the earthquake. This work shows the interrelation of spiritual qualities, as an important condition for psychological preparation to earthquake.

Adaptation problem is viewed in terms of flexibility and preparation, which ensures nervous and spiritual stability, stress resistance and presumes their interrelatedness and interchangeability.

Main goals:

1. To coordinate the approaches of social and psychological vulnerability to earthquake through analysis of professional literature.
2. To indicate analytically psychological phenomena occurring in men in the aftermath of earthquake, characterizing the level of individual's self-regulation and corresponding to activity requirements in the given situation.

3. To choose psychological methods evaluating the degree of expressiveness of investigated qualities of an Individual.
4. To reveal essential connections between personal qualities and given instructions.

Theoretical and practical significance:

The speech comprises theoretical generalizations and commentaries on the influence of emergency situations and age and gender features on social and psychological adaptation. People working in emergency situations and those who investigate their core problems will benefit from the results of this research.

Credibility of results:

Credibility of research is conditioned by methodological validity of hypothesis the researcher has put forward, its objective and problems and applied methods. Theoretical provisions and conclusions are received via detailed examination of scientific sources and relevant statistical analysis of experimental results.

Approbation and adoption of research results:

The scientific and practical principles of the work are presented by way of reports and publications during the scientific conferences on “Contemporary Issues Related to Geophysics and Engineering Seismology”, dedicated to 100th anniversary of NAS RA Academician A.G. Nazarov, the founder of the Institute of Geophysics and Engineering Seismology (IGES), held in Gumri on October 7-10, 2008, conference organized on November 18 -19, 2010 by YSU Chair of Geology on “Contemporary Issues in Applied Geology and Geography” dedicated to 90th anniversary of professor P.S. Boshnaghyan, International conference on “Key Seismic Issues in Armenia” held on December 5-6, 2011 by “National Seismic Protection Service” agency of RA Ministry of Emergency Situations dedicated to 23rd anniversary of 1988 earthquake in Spitak and the workshop organized jointly on October 12, 2012 by NSPS agency of ESM, investigation group of Japan International Cooperation Agency and the United Nations Children’s Fund (UNICEF) on “Innovative Approaches in Disaster Risk-reduction Studies Applied in the Educational Programs of RA” (Organization of studies at schools (the experience of Japan and Armenia). Investigation materials and results have been discussed at Theory seminars held by the Faculty of Psychology and Social Work of “Urartu” University of Practical Psychology and Sociology (2009, 2011) and by the Psychology Chair.

The work has been carried out at “Urartu” University of Practical Psychology and Sociology and in the “National Seismic Protection Service” agency. Five articles have been published on the subject of the thesis.

Work Structure:

The thesis consists of introduction, three chapters, conclusions, bibliography and attachments. The work consists of 180 pages, including 49 diagrams, 19 pictures, as well as 133 literary sources.